Հաստատվել է՝
Տնօրինության 19.08.2024թ.
Թիվ 02/120/24 որոշմամբ
Տնօրինության նախագահ-
Գլխավոր տնօրենի ժ/պ՝
Հովհաննես Թորոյան
Ուժի մեջ է՝02.09.2024թ

«Ամերիաբանկ» ՓԲԸ
+37410 561111, office@ameriabank.am

ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք.Երևան ___ _____ 20___թ.

"Ամերիաբանկ "ՓԲԸ-ն /գրանցված ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 08.09.1992թ. որոշմամբ, գրանցման համար 50, վկայական թիվ 0154, հասցե՝ ՀՀ ք.Երևան, Վ. Սարգսյան 2/ /այսուհետ՝ Բանկ/, ի դեմս _____, ով գործում է Տնօրինության նախագահ-Գլխավոր տնօրեն _____ կողմից ____/_____/_____թ. տրված _____ լիազորագրի հիման վրա (այսուհետ՝ **Գնորդ**), ի դեմս_____, որը գործում է Բանկի կանոնադրության հիման վրա, մի կողմից և _____ն (այսուհետ՝ **Վաճառող**), ի դեմս տնօրեն _____, որը գործում է կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, միասին անվանվելով Կողմեր, իսկ առանձին՝ Կողմ, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ **Պայմանագիր**) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Վաճառողը պարտավորվում է Գնորդին վաճառել Պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող թիվ 1 հավելվածում (այսուհետ՝ **Հավելված**) նշված ապրանքները (այսուհետ՝ **Ապրանք**), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել Պայմանագրի պայմաններին համապատասխանող որակյալ Ապրանքը և վճարել դրա համար:

2. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

2.1. Վաճառողն իրավունք ունի՝

2.1.1.պահանջել Գնորդից Պայմանագրի պայմաններին համապատասխանող որակյալ Ապրանքի համար վճարելու Պայմանագրի 3-րդ գլխով սահմանված չափով, կարգով և ժամկետներում:

2.2. Վաճառողը պարտավոր է՝

2.2.1.Պայմանագրի երկկողմանի ստորագրման օրվանից սկսած _____ /_____/ աշխ. օրվա ընթացքում հարկային հաշվով ք. Երևան, _____ հասցեում Գնորդին հանձնել Հավելված 1-ում նշված քանակին և տեսականուն համապատասխանող Ապրանքը՝ պատշաճ փաթեթավորված վիճակում, առանց թերությունների, չօգտագործված, երրորդ անձանց իրավունքներից ազատ և որևէ այլ կերպ չծանրաբեռնված վիճակում,

2.2.2. իր պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում հատուցել Գնորդի վնասներն ամբողջ ծավալով,

2.2.3. Ապահովել Ապրանքի տեսակի և որակի համապատասխանությունը դրա ստանդարտի/նկարագրի չափանիշներին,

2.3. Գնորդն իրավունք ունի՝

2.3.1.եթե Վաճառողը հրաժարվում է հանձնել Ապրանքը, միակողմանի հրաժարվել Պայմանագիրը կատարելուց:

2.3.2.եթե Վաճառողը հանձնել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, պահանջել ___ (_____) աշխատանքային օրվա ընթացքում լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը կամ հրաժարվել չհանձնված Ապրանքի համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարել է, ապա պահանջել ____ /_____/ աշխատանքային օրվա ընթացքում վերադարձնելու վճարված գումարը ամբողջությամբ:

2.3.3.եթե հանձնված է անպատշաճ որակի Ապրանք, իր ընտրությամբ պահանջել՝

2.3.3.1. համաչափ պակասեցնելու Ապրանքի գինը,

2.3.3.2. ողջամիտ ժամկետում, սակայն ոչ ուշ, քան ____ (_____) աշխատանքային օրվա ընթացքում, անհատույց վերացնելու Ապրանքի թերությունները, իսկ Գնորդի պահանջով՝ փոխարինելու նոր պատշաճ որակի Ապրանքով

2.3.3.3. հատուցելու Ապրանքի թերությունները վերացնելու համար իր կատարած ծախսերը:

2.3.4. չվերացվող կամ ողջամիտ ժամկետում չվերացվող թերություններ հայտնաբերելու դեպքում, իր ընտրությամբ՝

2.3.4.1. հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը

2.3.4.2. պահանջել ____ (_____) օրվա ընթացքում փոխարինելու անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին և Հավելվածին համապատասխանող որակի ապրանքով,

2.4. Գնորդը պարտավոր է՝

2.4.1. Ապրանքի համար վճարել Պայմանագրի 3-րդ գլխով սահմանված չափով, ժամկետներում և կարգով,

2.4.2. Ապրանքը Վաճառողից ընդունելու ժամանակ ստուգել Ապրանքի տեսականու, քանակի և որակի համապատասխանությունը Հավելվածին:

2. Հաշվարկները

3.1. Ապրանքի գինը կազմում է _____ (_____) ՀՀ դրամ՝ ներառյալ բոլոր հարկերը, երաշխիքային սպասարկման վճարը, ինչպես նաև Ապրանքը մինչև Պայմանագրի 2.2.1 ենթակետով նախատեսված հասցեն առաքելը կատարված բոլոր ծախսերը (այսուհետ՝ **Գին**):

3.2. Գնորդը պարտավորվում է վճարել Գինը Վաճառողին վերջինիս կողմից Ապրանքը մատակարարելուց հետո երկկողմանի հաստատված հարկային հաշվի հիման վրա 15 /տասնհինգ/ բանկային օրվա ընթացքում:

3.3. Գինը վերջնական է և փոփոխման ենթակա չէ:

3.4. Վճարումը կատարվում է ՀՀ դրամով. ամբողջ գումարը փոխանցվում է Պայմանագրի 8.1 կետում նշված հաշվեհամարին:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1 Պայմանագրով սահմանված ժամկետային պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում, ժամկետանց պարտավորության յուրաքանչյուր օրվա համար Վաճառողը Գնորդի գրավոր պահանջի դեպքում վերջինիս վճարում է տույժ Գնի 0.1 /զրո ամբողջ մեկ տասնորդական/ տոկոսի չափով, իսկ կետանցի 15-րդ օրը միանվագ տուգանք պայմանագրի գնի 10%-ի չափով՝ չդադարեցնելով օրական տույժերի հաշվարկը:

4.2 Պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետներում և կարգով Ապրանքի դիմաց Վաճառողին չվճարելու դեպքում ժամկետանց պարտավորության յուրաքանչյուր օրվա համար, Գնորդը Վաճառողի գրավոր պահանջի դեպքում վերջինիս վճարում է տույժ վճարման ենթակա չվճարված Գնի 0.1 /զրո ամբողջ մեկ տասնորդական/ տոկոսի չափով, իսկ կետանցի 15-րդ օրը միանվագ տուգանք պայմանագրի գնի 10%-ի չափով՝ չդադարեցնելով օրական տույժերի հաշվարկը:

4.3 Պայմանագրով չնախատեսված դեպքերում, Կողմի պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, դրա հետևանքով Կողմի մոտ առաջացած վնասի համար պատասխանատվության են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Պայմանագրով սահմանված տուժանքի (տույժի և/կամ տուգանքի) փաստացի կիրառման դեպքում տուժանքի տարեկան դրույքաչափը և/կամ տուժանքների հանրագումարի չափը գործում է ՀՀ օրենսդրությամբ նշված թույլատրելի առավելագույն չափերի սահմաններում:

4.4 Տուժանքների վճարումը Կողմերին չի ազատում Պայմանագրով ստանձնած իրենց պարտավորությունները կատարելու, ինչպես նաև վնասները հատուցելու պարտականությունից:

5. Ապրանքի որակը և երաշխիքային սպասարկման ժամկետը

5.1. Վաճառողը երաշխավորում է հանձնած Ապրանքի որակի համապատասխանությունը Պայմանագրով և Հավելվածով սահմանված պայմաններին:

5.2. Ապրանքի վրա տարածվում է Վաճառողի երաշխիքը ____ /_____/ տարի ժամկետով՝ պատշաճ որակով և ժամկետներում վերացնել առաջացած արտադրական թերությունները

6. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

6.1. Կողմերն ազատվում են Պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվությունից, եթե այդ պարտավորությունների պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի հետևանքով:

6.2. Պայմանագրի իմաստով անհաղթահարելի ուժ են համարվում այնպիսի արտակարգ հանգամանքները, որոնք ծագել են Պայմանագրի կնքումից հետո՝ չհանդիսանալով Կողմերից որևէ մեկի մեղքի հետևանք, տվյալ պայմաններում ողջամտորեն չէին կարող կանխատեսվել կամ կանխարգելվել Կողմերի կողմից և օբյեկտիվորեն

անհնարին են դարձնում պարտավորության պատշաճ կատարումը: Այդպիսի հանգամանքներ կարող են լինել, ներառյալ, բայց չսահմանափակվելով՝ բնական աղետները (երկրաշարժեր, ջրհեղեղներ, փոթորիկներ և այլն), սոցիալական անկարգությունները պատերազմը՝այդ թվումքաղաքացիական պատերազմը, ռազմական գործողություններ, գործադուլներ, հասարակական անկարգություններ, համաճարակը, համավարակը, պետական իրավասու մարմինների կամ տեղական ինքնակառավարման մարմինների գործողությունները, այդ թվում նաև՝ այդ մարմինների կողմից Կողմերի նկատմամբ պարտադիր իրավական ուժ ունեցող այնպիսի որոշումների կայացումը/իրավական ակտերի ընդունումը, և այլ նման հանգամանքներ ,որոնք անհնարին են դարձնում պարտավորության պատշաճ կատարումը:

6.3. Անհաղթահարելի ուժի ազդեցության հանգամանքներում հայտնված Կողմը պարտավոր է դրա ծագման պահից 24 (քսանչորս) ժամվա ընթացքում Պայմանագրով նախատեսված կարգով տեղեկացնել մյուս Կողմերին այդ մասին:

6.4. Կողմը չի կարող վկայակոչել անհաղթահարելի ուժի առկայության մասին և ազատվել Պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման պատասխանատվությունից, եթե չեն պահպանվել սույն գլխով նախատեսված կարգը և պայմանները, որպիսի դեպքում շարունակում են գործել Պայմանագրով նախատեսված պատասխանատվության պայմանները:

6.5. Եթե անհաղթահարելի ուժի ազդեցության հանգամանքները տևում են 2 (երկու) ամսից ավելի, ապա այն Կողմը, ում նկատմամբ ստանձնած պարտավորությունները չեն կատարվում կամ ոչ պատշաճ են կատարվում այդ հանգամանքների հետևանքով, իրավունք ունի միակողմանիորեն լուծել Պայմանագիրը՝ այդ մասին 10 (տասն) աշխատանքային օր առաջ Պայմանագրով սահմանված կարգով ծանուցելով մյուս Կողմին:

6.6. Պայմանագրի 6.2-րդ կետով սահմանված հանգամանքների վերանալու դեպքում Կողմերը 24 (քսանչորս) ժամվա ընթացքում տեղյակ են պահում միմյանց և հայտնում են պայմանագրային պարտավորությունների կատարումը վերսկսելու ժամկետի մասին:

6.7. Կողմերը սույնով արձանագրում են, որ անհաղթահարելի ուժի հետևանքով Պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվությունից /տուժանքի վճարումից, վնասների հատուցումից/ չի հանդիսանում Պայմանագրով ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարումից ազատման հիմք, եթե այլ բան ուղղակիորեն սահմանված չէ ՀՀ օրենսդրությամբ:

7. Հակակոռուպցիոն վերապահություն

7.1. Կողմերից յուրաքանչյուրը սույնով պարտավորվում է պահպանել հակակոռուպցիոն օրենսդրության պահանջները և չձեռնարկել որևէ գործողություն, որով կարող են խախտվել հակակոռուպցիոն օրենսդրության պահանջները, կապված Պայմանագրով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների հետ, այդ թվում (բայց չսահմանափակվելով)՝ չկատարել առաջարկ, չտալ համաձայնություն, խոստում, չիրականացնել ոչ օրինական վճարումներ, ներառյալ (բայց չսահմանափակվելով) կաշառքը՝ փողի կամ ցանկացած այլ տեսքով, որևէ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց, ներառյալ (բայց չսահմանափակվելով)՝ առևտրային կազմակերպություններին, պետական և (կամ) տեղական ինքնակառավարման մարմիններին ու պաշտոնատար անձանց, մասնավոր ընկերություններին և նրանց ներկայացուցիչներին:

7.2. Կողմերից որևէ մեկի կողմից Պայմանագրի 7.1 կետով նախատեսված պարտականությունների խախտման և հիմնավոր ապացույցների առկայության դեպքում տուժող կողմն իրավունք ունի պահանջել վնասների հատուցում մյուս կողմից և արտադատական կարգով միակողմանի հրաժարվել Պայմանագրի կատարումից:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Կողմերը սույնով պարտավորվում են Պայմանագրի կնքման և կատարման առնչությամբ Կողմերին հայտնի դարձած, ինչպես նաև մյուս Կողմի բացահայտած տեղեկատվությունը չհրապարակել, չտարածել, երրորդ անձանց հայտնի չդարձնել, ինչպես նաև երրորդ անձանց նման տեղեկություններ հայթայթելու հնարավորություն ուղղակիորեն կամ անուղղակիորեն չընձեռել, բացառությամբ այն դեպքերի, երբ տեղեկատվությունը գաղտնի չի համարվում, քանի որ.

8.1.1. նախապես հայտնի է ընդունող Կողմին այլ իրավաչափ աղբյուրներից/եղանակով,

8.1.2. հանդիսանում է կամ դառնում է հասարակայնորեն հասանելի,

8.1.3. թույլատրված է հրապարակման համապատասխան Կողմի գրավոր համաձայնությամբ:

8.2. Պայմանագրի 8.1 կետով Կողմերի համար սահմանված պարտավորությունը գործում է Պայմանագրի գործողության ողջ ժամկետի ընթացքում, ինչպես նաև Պայմանագրի գործողության ժամկետը լրանալուց հետո անորոշ ժամկետով:

8.3. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում երկկողմանի ստորագրման պահից և գործում է մինչև Պայմանագրով Կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջությամբ և պատշաճ կատարումը:

8.4. Պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ օրենսդրությունը:

8.5. Պայմանագրի բոլոր փոփոխություններ և/կամ լրացումները կատարվում են երկկողմանի ստորագրված գրավոր փաստաթուղթ կազմելու ձևով:

8.6. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

8.7. Պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, 2 (երկու) հավասար իրավաբանական ուժ ունեցող օրինակներից: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկական օրինակ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

9.1. Սույնով Կողմերն համաձայնում են, որ միմյանց հետ ցանկացած հաղորդակցում/ծանուցում/փաստաթուղթ, որը կապված է Պայմանագրի գործողության ընթացքում Կողմերի իրավունքների, պարտականությունների կամ պատասխանատվության սահմանման, փոփոխման կամ դադարեցման կամ Պայմանագրից բխող ցանկացած պահանջի կամ այլ հարցերի հետ, կատարվում է սույն Պայմանագրում նշված էլեկտրոնային փոստի և/կամ պաշտոնական էլեկտրոնային փոստի /առկայության դեպքում/ միջոցով, իսկ դրա/նց / բացակայության դեպքում սույն Պայմանագրում նշված փոստային հասցեով առաքման եղանակով,եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով կամ ՀՀ օրենսդրությամբ: Ընդ որում, Վաճառողը համարվում է պատշաճ ծանուցված, երբ ծանուցումն ուղարկվել է Վաճառողի Գնորդին տրամադրած պաշտոնական և/կամ այլ էլեկտրոնային փոստի հասցեով, և առկա է այն ստանալու մասին էլեկտրոնային հավաստում, եթե նույնիսկ բացակայում է այն կարդալու մասին էլեկտրոնային հավաստումը: Այս դեպքում Կատարողը համարվում է պատշաճ ծանուցված ծանուցումն ստանալուն հաջորդող օրվանից:

Վաճառող

_____

Հասցե՝ _____

“Ամերիաբանկ” ՓԲԸ

ՀՀ _____

ՀՎՀՀ _____

Էլ. փոստի հասցե _____

_____ _____

Կ.Տ.

Գնորդ

“Ամերիաբանկ” ՓԲԸ

Հասցե՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 2

office@ameriabank.am

ՀՎՀՀ 02502212

ՀՀ Կ/Բ Թ/Հ 103002101576

Էլ. փոստի հասցե _____

_____

Կ.Տ.

Հավելված 1

Նկարագրություն	Քանակ	Միավորի արժեքը ներառյալ բոլոր հարկերը	Ընդհանուր

Վաճառող

_____

Հասցե՝ _____

“Ամերիաբանկ” ՓԲԸ

ՀՀ _____

ՀՎՀՀ _____

_____ _____

Կ.Տ.

Գնորդ

“Ամերիաբանկ” ՓԲԸ

Հասցե՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 2

office@ameriabank.am

ՀՎՀՀ 02502212

ՀՀ Կ/Բ Թ/Հ 103002101576

_____

Կ.Տ.